

«ՀԱՅԿԱՇԷՆ» ԱՄԱՌԱՅԻՆ ՎԵՀԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ ԲՅՈՒՐԱԿԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 6-ին, ուրբաթ օրը, ժամը 13-ին, Հայոց Հայրապետի նախագահությամբ Բյուրականում կատարվում է «Հայկաշեն» ամսուային Վեհարանի բացման արարողությունը խանդավառ մթնոլորտում ու հանդիսավոր իրադրության մեջ:

1969 թվականի հունիսի 14-ին Հայոց Հայրապետի օրհնությամբ կատարվել էր «Հայկաշեն»-ի հիմնարկերը:

Հայրապետական ամսուային Վեհարանի հողամասը սիրով Հայոց Հայրապետին տրամադրել էր հայրենի իշխանությունը: Հողամասը գտնվում է Բյուրական գյուղի վերին մասում, Արագածի գեղատեսիլ, գմբուխոյա լանջին, Լուսավորչի կանթեղի ներքո... Հողամասի երկու կողմերից ձորն են գահավիժում երկու փրփրադեզ գետակներ:

Ամսուանոցի նախագիծը պատրաստել էր անվանի ճարտարապետ և Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի անդամ Իսաֆայել Իսրայելյանը:

Հայրապետական ամսուանոց-Վեհարանը կառուցվում է ամերիկահայ ծանոթ ու սիրված ազգային, Մայր Աթոռի հարազատ զավակ ու բարերար տիար Հայկ Գալուբջյանի նվիրատվությամբ:

Բյուրականը Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի ամենամեծ գյուղն է եղել, որի մասին հիշատակում է Ժ դարի սկզբին Հովհաննես Դրասխանակերտցի պատմաբան կաթողիկոսը:

Նորին Ա. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը հոկտեմբերի 6-ին, ժամը 13-ին, իր շքախմբով ժամանում է նորակերտ «Հայկաշեն» Վեհարանը:

Հայոց Հայրապետին ողնկցում են ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Տիրան արքեպ. Ներսույանը, ԱՄՆ-ի հայոց առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոնիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոսյանը, տ. Մուշեղ, տ. Արսեն, տ. Արիս, տ. Աղան, տ. Մեսրոպ վարդապետները, տ. Մասիս արեղան, Մայր Աթոռի սարկավազ-

ների դասը, մայրավանքի ղեկավար աշխատողները, ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը, Մայր Աթոռի ճարտարապետներ Արծրուն Գալիկյանը, Ծիլվան Խաչատրյանը, Մարտին Կարապետյանը և այլ հրավիրյալներ:

Հանդիսությանը ներկա են նաև «Հայկաշէն» Վեհարանի բարերարներ տեր և տիկին Հայկ-Ալիս Գալուրճյանները, որոնք ուխտավորաբար գտնվում են Մայր Աթոռում՝ Վեհափառ Հայրապետի հրավերով, ինչպես նաև ուխտավորներ ԱՄՆ-ից:

Հանդիսությանը ներկա է նաև ՀՍՍՀ Միևհատրների սովետին ստընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գառպարյանը:

Սկսվում է շենքի բացման արարողությունը Վեհափառ Հայրապետի աղոթքով:

Տիար Հայկ Գալուրճյանը հանդիսավորապես կտրում է «Հայկաշէն» Վեհարանի գլխավոր մուտքի ժապավենը և հրավիրում Հայոց Հայրապետին ու հանդիսությանը ներկա պաշտոնական անձանց ու հոգևորականներին դեպի մարմարապատ սրահը, որն այս առիթով զարդարվել էր տոնականորեն:

Հնչում է վեհ ու տիրական «Ջողորմության գոտուն բաց մեզ, Տէր» շարականը: Ապա ընթերցվում են ս. գրական համապատասխան հատվածներ, օրվա հանդիսությանը նվիրված:

Հոգևորականաց դասը խանդավատորեն ու միասիրտ երգում է Մայր Աթոռի հիմնը՝ «Էջ Միածինն ի Հօրէ... Եկայք շինեսցուք գտորք խորանն լուսոյ քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

Սարկավազների դասը թնդացնում է «Ամէն, ալելուիա»-ն, մինչ Հայոց Հայրապետը օրհնում է «Հայկաշէն» Վեհարանը՝ «Օրհնեսցի, պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի «Հայկաշէն» Վեհարանս», որին բոլոր ներկաները մասնակցում են «Ամէն»-ներով:

Արարողության ավարտին Հայոց Հայրապետը, խորապես հուզված ու բարձր տրամադրության մեջ այս հանդիսավոր օրվա առիթով ասում է օրհնության և գոհունակության հետևյալ խոսքը.

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ «ՀԱՅԿԱՇԷՆ» ՎԵՀԱՐԱՆԻ
ԲԱՑՄԱՆ ԱՌԻՅՈՎ**

Աստուծո ղողորմությամբ այսօր գտնվում ենք այստեղ, Արագածի փեշերին, այս նոր բարձրացած շենքի կամարների ներքո՝ Մեր օրհնությունը բերելու այս տանը և նրա բարերարներին, Մայր Աթոռի միաբանության, պաշտոնության, ժողովրդին, որ ներկա է այստեղ:

Մեր զահակալության 17-րդ դարադարձի առիթով այս շենքի բացումը ամենաթանկագին պարգևն է՝ ընծայված Հայոց Հայրապետին:

Թեև այս 17 տարիների ընթացքում, ինչպես ծանոթ է բոլորիդ, նպաստավոր պայմանների մեջ հայրենի բարեխնամ կառավարության բարյացակամությամբ և բարոյական օժանդակությամբ, Մեր բարերարների օգնությամբ, Մեր անմիջական գործակիցների աշխատակցությամբ կարողացանք բազում շինարարական գործեր կատարել, բազում եկեղեցական ծրագիրներ իրագործել, սակայն նրանց թվում այսօրվա բարձրացող այս շենքը, այս Վեհարանը իր ուրույն և բացառիկ տեղն է գրավում թե՛ իր ընտրված վայրով, թե՛ իր նպատակով և թե՛ իր բարերարների անձնավորությամբ:

Մենք այսօր արդեն ունենք երեք Վեհարան. պատմական Հին Վեհա-



«ՀԱՅԳԱՐՇՆ» ԵՐՈՒԱԿԱՆՈՒԹԵՑ ՎԵՇԱՐԱՅԻ ՔԱՆՏՐՈՒՄԻ ԲԱՏՄԱՆ ՀԱՆԳՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՒ ՏԵՍԱՐԱՆ, ԲՅՈՒՐԱԿԱՆ

րանը, որ, ինչպես գիտեք, վերածվեց լուսարձակ մեր Հայրապետների հիշատակին նվիրված թանգարանի, Նոր Վեհարանը, որ գործում է այսօր, 1962 թվականից ի վեր իբրև արժույթի և մշակութային կենտրոնը Հայոց Հայրապետական Աթոռի, և ահավասիկ այս երրորդ Վեհարանը՝ «Հայկաշէն» Վեհարանը, որը պետք է ծառայի իբրև ամառանոց, ամառային Վեհարան Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

Այս Նոր Վեհարանը հանգստյան վայր չպիտի լինի անշուշտ, այլ Մենք վստահ ենք, նաև աշխատանքի վայր՝ շարունակությունը հանդիսանալով Էջմիածնի Վեհարանի: Այստեղ պիտի լինի նաև այն վայրը, որտեղ Մենք պետք է ընդունենք նախ մեր բարերարներին, որոնք իրենց հատուկ հարկաբաժինը միշտ պիտի ունենան, բայց նաև այս Վեհարանը պիտի ընդունի հաճախ բարձրաստիճան հոգևորական հյուրեր թե՛ մեր եկեղեցու սպասավորներից և թե՛ օտար հոգևոր հյուրերից: Այսպիսով, «Հայկաշէն» Վեհարանը պիտի համընդհանուր ճշմարիտ շարունակությունը Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռի գործունեության և պիտի դառնա մի կենդանի, գործող և բնակության համար հաճելի կենտրոն:

Ամեն անգամ, երբ Հայաստանի հողի վրա մի շինարարական աշխատանք իր ավարտին է հասնում, երբ մի կառույց բարձրանում է դեպի երկինք, լինի դա բնակելի շենք կամ աշխատանքի վայր, պետական պալատ թե՛ գործարան, ճարտարարվեստի կենտրոն թե՛ մշակութի կամ արվեստի տաճար, Մեր սիրտը լցվում է անսահման հրճվանքով և հպարտությամբ:

Այս վերջին 50 տարիների ընթացքում Հայաստանը լրիվ կերպարանափոխվեց և վերակառուցվեց: Ամեն անգամ այսպիսի առիթներով Մեր մտածումը գնում է դեպի ետ, դեպի այն օրերը, երբ Հայաստանը ամբողջապես քարուքանդ եղած, ավերակ մի երկիր էր՝ թշվառ ժողովրդով, որբի և ողբի հայրենիք դարձած:

Մենք մեր անցյալի այս ողբերգական պատկերը չենք կարող մոռանալ և չպետք է մոռանանք, որովհետև Մենք համոզված ենք, թե այդ անցյալը, այդ ողբերգության հիշատակը այն ուժեղ գործոններից մեկն է, որ ոգեշնչում է մեզ այսօր, շինարարական տենդ և կիրք է բաշխում Մեզ, որպեսզի նվիրվենք հետ այսու շինարար աշխատանքի՝ հետզհետե ամոքելով մեր հին վերքերը և փոխելով դեմքը, կերպարանքը անցյալի մեր քարուքանդ հայրենիքի, մի առաքելություն, մի գործ, որ մեծ չափով աննախընթաց արագությամբ կատարված է արդեն շնորհիվ մեր երկրում ստեղծված բարենպաստ պայմանների, եղբայրական սովետական հանրապետությունների ընտանիքում, շնորհիվ հայ ժողովրդի համառ և անհոգմարեկ աշխատանքի, շնորհիվ մեր պետական ղեկավարների հայրենաշեն ոգու և շնորհիվ նաև արտասահմանի հայության օժանդակության:

Այս երջանիկ իրադրության մեջ գործում է այս վերջին տասը և ավելի տարիների ընթացքում, նաև Մայր Աթոռ ս. Էջմիածինը՝ վարակված ինքն էլ հայաստանյան շինարարական այս բարի կիրքով:

«Հայկաշէն»: Ինչքան խորհրդանշական է այս բառը: Երջանիկ մի գուգադիպությամբ, Մեր նվիրատուի անունը Հայկ է: Արդեն ամբողջ Հայաստանը «Հայկաշէն» է իր ծագումով: Ակնարկում ենք Հայկ Նահապետին: Ահավասիկ այս հայկաշեն երկրի մեջ Գավուրջյան Հայկը իր «Հայկաշէն»-ն էլ բարձրացրեց դեպի երկինք՝ ամուր խարսխելով այն հայրենի հողի վրա, Լուսավորչի անմար կանթեղի հովանու ներքև: Ինչպես գիտեք, մենք մեր հոգու

աչքերով տեսնում ենք այդ անմար կանթեղը, որ կախ է ընկած երկնքից քա-
ռագագաթ Արագածի կատարին:

Մենք Մեր սիրո և երախտագիտության խոսքն ենք ուզում ասել տիկին Ալիսին և պրն. Հայկ Գավուրճյանին՝ մաղթելով նրանց տակավին երկար տարիներ մարմնական առողջությամբ, հոգվո խաղաղությամբ, որպեսզի նրանք շարունակեն իրենց առաքելությունը նաև հետ այսու մեր եկեղեցու պայծառության համար:

Հայկ Գավուրճյան ոչ միայն Միացյալ Նահանգների մեջ, այլև ամբողջ տիտուքի և Հայաստանի մեջ ծանոթ մի անուն է և իրոք բացառիկ մի անձ-
նավորություն ամեն կերպիվ: Ավելի քան կես դար է, ինչ այս սքանչելի մար-
դը ծայրի պես ամուր կանգնած է՝ բարձր պահելով ամերիկյան քրիստոսասեր
երկրում դրոշակը հայ քրիստոնեության, բարձր պահելով անունը հայ պաա-
վական ազգի և մշակույթի, բարձր պահելով դրոշը Մայր Աթոռ ու Էջմիածնի
և ամենայն հայոց հավիտենական հայրենիքի:

Այսօր բարիքներ բաշխող նրա ձեռքը երկարում է նաև Ամերիկայից մին-
չել Հայաստան, մինչև ու Էջմիածին, և երջանիկ է, կարծում ենք, ինքն էլ իր
տիկնոջ հետ միասին՝ տեսնելով այս շենքի պատկերը գրեթե ամբողջապես
կառուցված իբրև իրենց ընծան հայ եկեղեցուն, Մայր Աթոռին և ու Էջ-
միածնին:

Մեր օրհնությունը ձեզ և Մեր սրտից բխած ամեն բարի մաղթանք այժմ
և հավիտյան, ամեն:

Այնուհետև Հայոց Հայրապետին ուղղված շնորհավորության և երախ-
տագիտության հետևյալ խոսքով հանդես է գալիս ԱՄՆ-ի հայոց առաջնորդ
ու. Թորգոմ արքեպ. Մանուկյանը.

Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ

«Վեհափառ Հայրապետ,


Բացառիկ ուրախություն է ինձի համար անձնապես, իբրև Ամերիկայի
հայոց թեմի առաջնորդ, ինչպես նաև, վստահ եմ, ուրախություն է Տիրան
արքեպիսկոպոսին և Ամերիկայեն եկած մեր թեմի անդամներն անոնց հա-
մար, որոնք ներկա են այստեղ՝ մասնակցիլ «Հայկաշէն» Վեհարանի բաց-
ման արարողության:

Ձեր հայրական խոսքերը, ուղղված տեղ և տիկին Գավուրճյաններուն,
հիմնապես արդար և ճիշտ կներկայացնեին նաև զգացումները մեր թեմին բո-
լոր անդամներուն: Միտքս կերթա Ավետարանի խոսքերուն. «Մարդուն սիրտը
այնտեղ է, ուր որ իր գանձն է»:

Տեղ և տիկին Գավուրճյաններուն գանձը մեր հայ ժողովուրդն է, հայ
եկեղեցին է Ամերիկայի մեջ, ինչպես նաև Մայր Աթոռ ու Էջմիածինը և հայոց
հայրենիքը: Եվ ճիշտ այն պատճառով, որ անոնց գանձը այդ նվիրական սրր-
բություններն են, իրենց սիրտն այլ այնտեղ է: Ահա թե ինչու անոնք օժան-
դակած են Աստուծո կողմն իրենց պարզապես նյութական բարիքներու չափով:

Ինձի համար անձնապես ուրախություն էր լսել տիկին Գավուրճյանեն, որ
այս առիթը իրենց կյանքին մեծագույն երջանկությունն է, որովհետև իրենք
երբեք չէին մտածած, թե իրենց կյանքին մեջ պատեհությունը պիտի ունենա-
լին այս տեսակ բարեգործություն մը ևս կատարելու:

Ավելի հուզիչ է նշել, որ իրենք կնախընտրեն մահվան պարագային
«Հայկաշէն»-ի շուրջը թաղվիլ, Արագածի փեշերուն:



«ՀԱՅԿԱՍՏԷՆ» ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՎԵՀԱՐԱՆԻ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ
ՀԱՅԿ ԵՎ ԱՆԻՍ ԳԱՎՈՒԻՃՑԱԿՆԵՐԸ, ԲՅՈՒՐԱԿԱՆ

Նման արտահայտություններ երբ ես կլսեմ որևէ հայ քերական, անհունորեն կուրախանամ, ինչպես նաև, վստահ եմ, որ կուրախանա Ամենայն Հայոց Հայրապետը և որևէ մեկ հայ, որ իր հոգիին մեջ ունի հիշատակը իր ժողովրդի պատմության, պաշտամունքը իր եկեղեցիին:

Հայո հոգիին միությունն է, որ խոսիլ կուտա ամեն մեկ հայուն, և ես այսօր տեղ և տիկին գավուքձյաններուն կողմն կհայտնեմ թե՛ իրենց երախտագիտությունը Ջերդ Սրբության և թե՛ մեր թեմի բոլոր անդամներուն երախտագիտությունը այն առիթին համար, որ կուտաք մեզի հիշատակ ունենալու մեր հայրենի երկրին մեջ:

Օրհնություն է հիշատակը ինքնին, բայց ավելի մեծ օրհնություն է, երբ այդ հիշատակը կկանգնի մեր պատկերու հողին վրա:

Մենք միշտ կաղոթենք, որ ոչ միայն հաստատուն մնա հայոց հայրենիքը, հաստատուն մնա Հայոց Հայրապետությունը, այլև մանավանդ տարածվի և տարածվի ոչ միայն հողի իմաստով, այլև հոգիով: Հայո հոգին է, որ հավիտենական է, աշխարհագրական ինչ փոքր ծավալի մեջ և ալ ան գտնվի:

Քեռևաբար, Վեհափառ Հայրապետ, ընդունեցեք ոչ միայն տեղ և տիկին Գավուքձյաններու երախտագիտությունը, այլ նաև ընդունեցեք Ամերիկայի Ջեր բոլոր գավակներու երախտագիտությունը այն բոլոր առիթներուն համար, որոնցմով անոնք կհարստանան ամեն անգամ, որ իրենք կուտան:

Կաղոթենք, որ մեր բոլորին գանձերը ըլլան այդ սրբությունները, որպեսզի մեր սիրտը և մեր կյանքը և մեր գործը մեր հայրենի պատմության և սրբություններուն մեջ գտնվին:

Օրհնեցեք մեզ, Վեհափառ Տեր»:

Հայոց Հայրապետին և բարերար տիար Հայկ Գավուքձյանին շնորհակալույուն է նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը, այս ուրախ առիթով:

Ապա ընդհանուր ծախերի մեջ իր սրտի խոսքն է ասում բարերար Հայկ Գավուքձյանը. «Ես ուրախ եմ, որ կգտնվիմ այսօր հոս, և կրցա գալ ներկա ըլլալու այսօրվա հանդեսին:

Ուրախ եմ նաև, որ մեր Հայաստանն առաջ կերթա և կգարգանա ամեն մասերով: Տարբերությունը շատ մեծ է, տարիներ առաջ իմ տեսածիս և այսօրվա Հայաստանի նվաճումներուն մեջ: Աստված երկար կյանք տա մեր Հայրապետին»:

Հայոց Հայրապետը Իր խոսքն ուղղելով «Հայկաշէն»-ի անդամներին, շինարարներին, օրհնում է նրանց աշխարհաշէն, պատվալոր գործը: Հանդիսության ավարտին բոլոր ներկաները հյուրասիրվում են հայկական շամպայնով, մրգերով և քաղցրավենիներով:

Հանդիսության ավարտին Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Իր շքախմբի անդամների և բարերարների, այցելում է «Հայկաշէն» Վեհարանի բոլոր հարկաբաժինները:

Ժամը 15-ին Վեհափառ Հայրապետը վերադառնում է՝ ընկերակցությամբ Իր շքախմբի և բարերարների, հոգեպես մխիթարված և բարձր տրամադրության մեջ:

1969 թվականի հունիսի 14-ին, «Հայկաշէն» Վեհարանի հիմնարկերի օրը, նորակառույց շենքի հիմքում դրվել էր հետևյալ հիշատակարանը.

«ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ»

Ի Հայրապետութեան Տեանն Տեանն Վազգենի Առաջնոյ կաթողիկոսին Ամենայն Հայոց, կառուցաւ հայրապետական հովոցս ի լեռնակողման հիւրականայ գեղջ, արդեամբ եւ ծախսիւր կ. պոլսեցի ամերիկաբնակ Հայկ Գաւուքճեանի, վասնորոյ կոչեցաւ հովոցս՝ «Հայկաշէն», ի յիշատակ հանգուցեալ ծնողացն իւրոց, եւ ի վայելումն Հայրապետացն Ամենայն Հայոց, եւ միարանիցն Մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի:

Յիշատակն բարերարին օրհնութեամբ եղիցի. ամէն:
 Ի 14-ն յունիսի 1969 ամի»:

